գայ չունի: Հայոց աշխարհը, ինչպէս Հիմալայի ստորոտը եւ Հռոմէական բլուրները, դերազանցապէս կրօնական է: Աշխարհը խաչաձեւող անտեսական ճանապարհներից դուրս, դրանք հանդիսանում են իրրեւ խորհրդաւոր կէտեր, ուր երկրագունդը մի վայրկեան կանգ է առնում եւ երկար շնչում:

Մեր հոգեկան անունդը Արարատից է գալիս՝ չոր ու ցամաք, տնտեսապէս անպէտք մի լեռ: Եւ ի զուր չէ, որ հայ ժողովուրդը պատմութեան մէջ չտեսնուած չարչարանքներ է կրել, միլիոնաւոր զոհեր է տուել, ծով արիւն է թափել՝ այդ լեռը չկորցնելու համար:

Եթէ մենք ուրանանք մեր անցեալը, դաւաճանենք մեզ, եւ հետեւելով իրապաշտ առաքեալների դաւանանքին, ընդունենք քաղաքակրթական չուկայում մեզ վիճակուած փոքրիկ խանութպանի դերը, մենք կը ստորագրենք մեր մահը: Հայաստանը կը լինի, ինչպէս այսօր, Մոսկուայի առջեւ դողացող մըշտընջենական մուրացիկ, որը պէտք ունի դրամագլխի, որպէսզի աշխատի, պէտք ունի շուկայի, որպէսզի ծախի, պէտք ունի դրական գիտութեան, որպէսզի մտածի:

Ես ուրանո՛ւմ եմ ծխնելոյզային եւ ստամոքսային այդ Հայաստանը:

Մեր երկիրը այն բախտաւոր ծայրերիցն է, որոնք չեն կերակրում, այլ կերակրւում: Այդպէս էր Աթէնքը, այդպէս էր մասամբ Հռոմը եւ այդպէս է Արեւելքի մեծ մասը: Ուստի, հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կենտրոնացում, զոհաբերութեան ոգի, խոր հաւատք եւ առաքելական մոլեռանդութիւն:

Արեւմուտքը, խենթացած գաղանի նման, քերում է երկրագնդի մակերեսը նոր դանձեր գտնելու համար, եւ անդիտակցաբար փորում է իր գերեզմանը: 18-րդ դարից նա ժառանգել է նիւթապաշտ իմացականութեան դիւրին դէնքը, որով կարողանում է յաղթել բնութեան տարրական ուժերին: Նա ուրանում է հոգեկան արժէքների աւանդական շաղկապումը, մարդը իրի է վերածում, ազգութիւնը տնտեսական ազդակի ու խորհուրդը նախապաշարումի: Ու իր ծոցից դուրս եկած լաւագոյն խորհողները՝ Շպենգլեր, Կայզերլինգ եւ շատ ուրիշներ՝ վկայում են նրա մտաւոր մահը:

Բոլշեւիզմը ծնուած է ոչ թէ, ինչպէս շատերը կարծում են եւ ինչպէս առաջ կարծում էի ես եւս, վերջին հարուածը տալու համար մեռնող այդ աշխարհին, այլ ընդհակառակը, բռնութեան ուժով, շարունակելու համար նրա հոգեվարքը:

Նոր մշակոյթային շրջանը սկսւում է Արեւելքում:

Զմոռանանք, որ քրիստոնէութիւնը առաջ եկաւ Հրեաստանի ամենայետամնաց եւ աղքատիկ գաւառի մէջ, Հռոմէական կայսրութեան հզօրագոյն դարում:

Հայոց աշխարհը, արիւնի եւ մահի ողբերգական այդ երկիրը, այլեւս յղի է բոլոր կարելիութիւններով: Արարատի աստուածաշնչական ոգին պատրաստ է ճառագայթելու, նրա թաքնուած ստեղծագործական թափը, հրակայ սերմի նման պայթելու վրայ է, ու դարը մօտենում է, երբ վերջապէս հայ ժողովուրդը պիտի գտնէ ինքն իրեն: Լինի այն, ինչ որ է՛: Կատարի իր դերը, ասի իր խօսքը:

Մեզ վիճակուած է ապրել բարձրաւանդակի վրայ: Մեր դաշտերը եւ մեր լճերը մաղըցում են դէպի լեռը: Վայ մե՛զ, եթէ վար իջնենք. կ'ընկնենք արդի քաղաքակրթութեան ծխնելոյզի տակ, մեքենայի մաս կը դառնանք կամ խանութպան:

Հայաստանում դեռ հովիւներ կան: Նրանք ճանաչում են աստղերը եւ քաջ գիտեն բոլոր ճանապարհները:

Մշակոյթը հովիւների գիտութիւն է:

(Շարունակելի)

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան